ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 3

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ա-ն (ամուսինը) և Բ-ն (կինը) 2003թ. հունվարի 10-ին ամուսնացել են: Ամուսնությունից հետո Բ-ն, որպես միակ ժառանգ, իր ծնողներից ժառանգել է Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող առանձնատունը, որից հետո այն վաճառել է: Առանձնատան վաճառքից ստացված գումարով ամուսինները 2006թ. հունիսի 20-ին Երևանում ձեռք են բերել մեկ սենյականոց բնակարան (այսուհետ՝ բնակարան), որի նկատմամբ ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրի համաձայն՝ հավասար բաժիններով (յուրաքանչյուրին ½) գրանցվել է վերջիններիս բաժնային սեփականության իրավունքը: 2006թ. սեպտեմբերի 1-ին Ա-ն և Բ-ն ամուսնալուծվել են:

Ամուսնալուծությունից հետո բնակարանում շարունակել է միայնակ բնակվել Բ-ն, ով հոգացել է նաև բնակարանի պահպանման բոլոր ծախսերը, կատարել ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, վճարել կոմունալ ծառայությունների դիմաց: 2006թ. դեկտեմբերի 20-ին Ա-ն հասարակ գրավոր ձևով կազմել և ստորագրել է «նվիրատվություն» վերտառությամբ փաստաթուղթ, որում նշել է. *«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարանը գնվել է Բ-ի ծնողներից ժառանգություն ստացած առանձնատան վաճառքից ստացված գումարով, այն ամբողջովին պատկանում է Բ-ին, հետևաբար ես բնակարանի իմ բաժինը նվիրում եմ Բ-ին»*:

Ամուսնալուծությունից հետո Ա-ն փոխառությամբ պարբերաբար մեծ գումարներ է վերցրել Գ-ից, ով, հետ չստանալով իր գումարները, 2009թ. հայցադիմումով դիմել է դատարան՝ հայցի ապահովում կիրառելով Ա-ի ամբողջ գույքի վրա: Դատարանի՝ հայցի ապահովում կիրառելու մասին 2009թ. հունվարի 15-ի թիվ ԴԴ/0000/02/09 որոշման հիման վրա արգելանք է դրվել Ա-ի ամբողջ սեփականության, այդ թվում՝ Երևանի բնակարանի վրա: Ա-ի որդու՝ Դ-ի օգնությամբ Ա-ն իր վճարային պարտավորությունները կատարել է, որի արդյունքում Գ-ն հայցից հրաժարվել է, և թիվ ԴԴ/0000/02/09 գործի վարույթը կարճելու մասին դատարանի 2010թ. հունվարի 15-ի վճռով գույքի նկատմամբ արգելանքը հանվել է:

Դ-ն Ա-ի առաջին ամուսնությունից ծնված միակ որդին է, ով Ա-ի և Բ-ի ամուսնությունից հետո իր կնոջ և երեխաների հետ բնակվում էր առանձին:

2011թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 20-ը Բ-ն մեկնել է արտասահման՝ իր քրոջ մոտ: Այդ ընթացքում բնակարանն առանց հսկողության չթողնելու նպատակով այն բնակության համար տրամադրել է քրոջ դստերը, ով իր ընտանիքի հետ այնտեղ բնակվել է մինչև Բ-ի վերադարձը՝ 2012թ. դեկտեմբերի 20-ը: Բնակարանը քրոջ դստերը հանձնելիս Բ-ն կազմել է «ստացական» վերտառությամբ փաստաթուղթ, որում կողմերը գրառում են կատարել բնակարանը 2011թ. դեկտեմբերի 20-ին հանձնելու և, համապատասխանաբար, 2012թ. դեկտեմբերի 20-ին այն Բ-ին վերադարձնելու մասին:

2015թ. հունվարի 10-ին Ա-ն մահացել է, վերջինիս մահից հետո նրա ողջ գույքի նկատմամբ ճանաչվել է միակ որդու՝ Դ-ի ժառանգության իրավունքը: Դ-ն ըստ օրենքի ժառանգության վկայագիրը ստացել է 2015թ. օգոստոսի 20-ին, որում Ա-ի այլ գույքերի հետ միասին ներառվել է նաև Երևանի բնակարանի ½-րդ բաժնեմասը:

Բ-ն 2017թ. դեկտեմբերի 28-ին դիմել է դատարան՝ խնդրելով ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը ամբողջ բնակարանի նկատմամբ:

Դ-ի դիրքորոշումը.

Դ-ն, ներգրավվելով գործի քննությանը, ամբողջովին առարկել է Բ-ի պահանջի դեմ, նշելով, որ վերջինս 10 տարի անընդմեջ չի տիրապետել գույքը որպես սեփական: Մասնավորապես, վերջինս նշել է, որ ինքը, հոր մահից հետո ընդունելով ժառանգությունը, ստանալով ժառանգության վկայագիրը, արդեն իսկ քայլեր է ձեռնարկել գույքը երրորդ անձանցից պահպանելու համար: Ավելին, նա նշել է, որ 2011թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 20-ը Բ-ն չի բնակվել բնակարանում, ուստի անընդմեջ 10 տարի տիրապետելու պայմանը չի պահպանվել: Դ-ն նշել է նաև, որ Բ-ի կողմից գույքի տիրապետումը չի կարող համարվել բարեխիղճ, քանի որ բոլորը գիտեն, որ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը կնքվում է նոտարական կարգով, ենթակա է պետական գրանցման, հետևաբար իր հայրը իրականում բնակարանի իր բաժինը չի նվիրել Բ-ին: Դ-ն դատարանին է ներկայացրել նաև թիվ ԴԴ/0000/02/09 քաղաքացիական գործով

հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը, համապատասխան կատարողական թերթի հիման վրա բնակարանի ½ բաժնեմասի վրա արգելանք դնելու մասին ԴԱՀԿ ծառայության համապատասխան որոշումները և նշել, որ 2009թ. հունվարի 15-ից մինչ 2010թ. հունվարի 15-ը գույքը եղել է արգելանքի տակ, դրանով ապահովվել է գույքի սեփականատիրոջ վճարային պարտավորության կատարումը, հետևաբար, իր հայրը չի հրաժարվել այդ գույքից: Նա նշել է նաև, որ նշված գործով բռնագանձման ենթակա գումարի մի մասը ինքն է վճարել հայցվորին, քանի որ Ա-ի միակ ժառանգն էր և ցանկանում էր պահպանել վերջինիս գույքը, այդ թվում՝ բնակարանի բաժնեմասը:

2018թ. փետրվարի 20-ին Դ-ն հայց է ներկայացրել Բ-ի դեմ՝ պահանջելով բնակարանից բնեղենով առանձնացնել իր բաժնեմասը: Նա նաև նշել է, որ հայցի ներկայացմամբ նույնպես հավաստվում է այն հանգամանքը, որ ինքը չի հրաժարվել բնակարանից և ցանկացած եղանակով պայքարում է այն Բ-ի տիրապետումից ազատելու համար:

Բ-ն առարկել է հայցի դեմ՝ նշելով, որ ամբողջ բնակարանն իրենն է, ինքը չի պատրաստվում այն որևէ եղանակով կիսել Դ-ի հետ կամ նրան որևէ գումար վճարել բնակարանի մասի դիմաց:

Գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

<u>Հարցադրում 1.</u>

Արդյո՞ք Ա-ի վճարային պարտավորություններով առանձնատան նկատմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը (արգելանքը), Դ-ի կողմից Ա-ի պարտքի մարմանն աջակցելը, Դ-ի կողմից ժառանգության ընդունման փաստը, 2018թ. փետրվարի 20-ին ընդհանուր բաժնային սեփականությունից բաժնի առանձնացման հայց ներկայացնելը հիմք են գույքի նկատմամբ Բ-ի կողմից ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը չճանաչելու համար: Հարցին պատասխանե՛ք՝ ելնելով այն կանխադրույթից, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառման մյուս բոլոր պայմաններն առկա են:

<u>Հարցադրում 2.</u>

Արդյո՞ք Բ-ի տիրապետումը կարող է համարվել «բարեխիղճ» և «անընդմեջ», եթե Ա-ի կողմից կազմված «նվիրատվություն» գործարքը չի համապատասխանում օրենքով գործարքի ձևին ներկայացվող պահանջներին, և Բ-ն 2011թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 20-ը առանձնատունը հանձնել է այլ անձի տիրապետմանն ու օգտագործմանը: Հարցին պատասխան՛ք՝ ելնելով այն կանխադրույթից, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառման մյուս բոլոր պայմաններն առկա են:

<u>Հարցադրում 3.</u>

Արդյո՞ք Բ-ի ժառանգություն ստացած գույքի վաճառքից ստացված գումարը (դրամական միջոցները) համարվում էր ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը, և ամուսնական պայմանագրի բացակայության պարագայում այդ գումարով ձեռք բերված գույքը արդյո՞ք չէր համարվի Բ-ի սեփականությունը: Հիմնավորե՛լ պատասխանը՝ անդրադառնալով նաև այն հարցին, թե «ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք» օրենսդրական եզրույթը կիրառելի՞ է արդյոք դրամի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտի նկատմամբ:

<u>Հարցադրում 4.</u>

Համեմատե՛ք տվյալ խնդրի փաստական հանգամանքները ստորև ներկայացված փաստական հանգամանքների հետ: Նշե՛ք տարբերությունները՝ գնահատելով, թե դրանցից որոնք են էական ձեքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման հարցի քննարկման համար:

ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Ա-ն և Բ-ն 2003թ. հունվարի 10-ին ամուսնացել են: Ամուսնությունից հետո Բ-ն, որպես միակ ժառանգ, իր ծնողներից ժառանգել է Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող առանձնատունը, որից հետո այն վաճառել է: Առանձնատան վաճառքից ստացված գումարով ամուսինները 2006թ. հունիսի 20-ին Երևանում ձեռք են բերել

մեկ սենյականոց բնակարան (այսուհետ՝ բնակարան): Բնակարանի առուվաճառքից բխող իրավունքների պետական գրանցումն իրականացնելիս սեփականության իրավունքի վկայականում նշվել է միայն Ա-ի անունը: 2006թ. դեկտեմբերի 27-ին Ա-ն և Բ-ն ամուսնալուծվել են:

Ամուսնալուծությունից հետո բնակարանում շարունակել է միայնակ բնակվել Բ-ն, ով հոգացել է նաև բնակարանի պահպանման բոլոր ծախսերը, կատարել ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, վճարել կոմունալ ծառայությունների դիմաց:

2016թ. դեկտեմբերի 28-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 28-ը Բ-ն մեկնել է արտասահման՝ իր քրոջ մոտ: Այդ ընթացքում բնակարանն առանց հսկողության չթողնելու նպատակով այն բնակության համար տրամադրել է քրոջ դստերը, ով իր ընտանիքի հետ այնտեղ բնակվել է մինչև Բ-ի վերադարձը՝ 2017թ. դեկտեմբերի 28-ը: Բնակարանը քրոջ դստերը հանձնելիս Բ-ն կազմել է «ստացական» վերտառությամբ փաստաթուղթ, որում կողմերը գրառում են կատարել բնակարանը 2016թ. դեկտեմբերի 28-ին հանձնելու և, համապատասխանաբար, 2017թ. դեկտեմբերի 28-ին այն Բ-ին վերադարձնելու մասին:

Բ-ն 2017թ. դեկտեմբերի 28-ին դիմել է դատարան՝ խնդրելով ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը ամբողջ բնակարանի նկատմամբ:

Ա-ն, ներգրավվելով գործի քննությանը, ամբողջովին առարկել է Բ-ի պահանջի դեմ, նշելով, որ ինքը երբեք չի հրաժարվել բնակարանից և չնայած այն հանգամանքին, որ ամուսնալուծության օրից՝ 2006թ. դեկտեմբերի 27-ից այնտեղ չի բնակվում ու չի կատարում որևէ կոմունալ վճարում, բնակարանից չի հրաժարվում:

<u>Հարցադրում 5.</u>

4-րդ հարցադրմամբ ներկայացված փաստական հանգամանքների պայմաններում մինչև ամուսնալուծությունը Ա-ն արդյոք միանձնյա կարո՞ղ է բնակարանն օտարել երրորդ անձի՝ ղեկավարվելով Բ-ի համաձայնության կանխավարկածով (եթե այդպիսին պահանջվում է) և Բ-ին որևէ եղանակով չներգրավելով գործարքի կնքման գործընթացին: Հարցադրմանը պատասխանե՛ք՝ անդրադառնալով նաև նշված իրավական խնդրի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը: Հիմնավորե՛ք պատասխանը: